«ԸՆԴԴԵՄ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ» ԳԼՈԲԱԼ ՖՈՐՈՒՄ ԵՐԵՎԱՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Թորբյորն Յագլանդը, Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի նախագահ Դանիել Ֆեյերստեյնը:

Ֆորումի ընթացքում քննարկվեցին միջազգային իրավունքում մարդկության հանդեպ հանցագործությունների կանխարգելման միջոցների զարգացմանը, ցեղասպանությունների հետեւանքների վերացմանն ու պատասխանատվության խնդիրներին վերաբերող հարցեր: Ֆորումի շրջանակներում, անցկացվեց մասնակից խորհրդարանականներն ընդդեմ ցեղասպանության լիագումար նիստը, որի ընթացքում ելույթներով հանդես եկան խորհրդարանական պատվիրակությունների ներկայացուցիչներ:

Ֆորումի շրջանակներում, Հայաստանի նախագահ, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի նախագահ Սերժ Սարգսյանը Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում դիտեց «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ հասարակական-քաղաքական ֆորումի համատեքստում Հայաստանի ազգային գրադարանի ներկայացրած «Հայոց ցեղասպանությունը գրականության մեջ» խորագրով ցուցադրությունը՝ նվիրված Մեծ եղեռնի 100-րդ տարելիցին:

Հայաստանի նախագահը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդի, «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորումի բացման նիստի նախագահող Լուիզ Մորենո-Օկամպոյի եւ Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի նախագահ Դանիել Ֆեյերստեյնի հետ, այցելեց նաեւ «Ցեղասպանություն» խորագրով լուսանկարների ցուցահանդես, որտեղ ներկայացված են ցեղասպանությունների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության, ինչպես նաեւ տարբեր հակամարտությունների, մարդկային ողբերգությունների պատճառ դարձած բռնությունների թեմայով աշխարհի լավագույն 8 լուսանկարիչների աշխատանքները, ովքեր այսօր էլ աշխատում են աշխարհի ամենավտանգավոր կետերում:

Նկարում.- Վրաստանի պատվիրակության անդամները ֆորումում

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

ՕԲԱՄԱՆ ԿՐԿԻՆ ՕԳՏԱԳՈՐԾԵՑ «ՄԵԾ ԵՂԵՌՆ» ԵԶՐԸ

ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման, ոգեկոչելով Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը, 1915 թվականի սոսկալի իրողության բնութագրման համար կրկին օգտագործել է «Մեծ եղեռն» եզրը: ԱՄՆ նախագահը միաժամանակ ողջունել է Հռոմի Պապի հայտարարությունը՝ ընդգծելով, որ հայերը սպանվել են իրենց պատմական հայրենիքում:

«Այս տարի մենք հիշատակում ենք Մեծ եղեռնի՝ 20-րդ դարի առաջին զանգվածային վայրագությունների հարյուրամյակը: 1915 թվականից սկսած՝ Օսմանյան կայսրությունում ապրող հայերը տեղահանվեցին, կոտորվեցին եւ իրենց մահը գտան գաղթի ճանապարհին: Ոչնչացվեց նրանց մշակույթը եւ ժառանգությունն իրենց հինավուրց հայրենիքում: Սարսափելի բռնությունների հետեւանքով, որոնք տառապանք բերեցին բոլոր կողմերին, մեկուկես միլիոն հայեր կործանվեցին», - ասաց ԱՄՆ նախագահը:

Օբաման նաեւ ընդգծեց. «Ես հետեւողականորեն հայտարարել եմ 1915-ին կատարվածի վերաբերյալ իմ սեփական տեսակետը, եւ իմ դիրքորոշումը չի փոխվել: Փաստերի լիակատար, շիտակ եւ արդարացի ճանաչումը մեր շահերից է բխում»:

2008 թվականին Միացյալ Նահանգների նախագահական ընտրությունների քարոզարշավի ընթացքում Բարաք Օբաման իր հրապարակային հայտարարություններում բազմիցս ճանաչել է Հայոց ցեղասպանությունը եւ խոստացել՝ նախագահ ընտրվելու դեպքում պաշտոնապես ընդունել այն: ԱՄՆ նախագահը, սակայն, մինչ օրս չի կատարել իր նախընտրական խոստումը:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ բազմահազարանոց հանրահավաքներ անցկացվեցին Նյու Յորքում, Լոս Անջելեսում, ԱՄՆ մյուս քաղաքներում:

ԱՎՍՏՐԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՃԱՆԱՉԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ավստրիայի խորհրդարանի բոլոր վեց խմբակցությունները ընդունեցին համատեղ հայտարարություն Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման վերաբերյալ: Այն պաշտոնապես հրապարակվեց ապրիլի 22-ին Ավստրիայի խորհրդարանի նիստում, որի մեկնարկին բոլոր ուժերը նախ լռության րոպեով հարգեցին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը:

Հայտարարությունը հստակ սահմանում է, որ 1915թ. հայերի հետ կատարվածը ցեղասպանություն էր, կոչ է հղում Թուրքիային՝ առերեսվել պատմության հետ, ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Ավստրիան ընդունում է իր պատասխանատվությունը՝ Առաջին աշխարհամարտի ժամանակ Օսմանյան կայսրության եւ Ավստրո-Հունգարիայի դաշնակցության առումով:

ԸՆԴՈՒՆՎԵՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ԲԱՆԱՁԵՎ

Գերմանիայի Բունդեսթագի նախագահ Նորբերթ Լամերթը խորհրդարանի լիագումար նիստում, որի օրակարգի առաջին հարցը 1915-ին Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանությունը ճանաչող նոր բանաձեւի քննարկումն էր, 1915-ի եղեռնությունն անվանեց ցեղասպանություն:

«Ցեղասպանությունն արժանի է խստագույն պատժի: Գերմանացիները, սեփական փորձից ելնելով, կոչ են անում մյուսներին առերեսվել իրենց պատմությանը, եթե անգամ դա ցավալի է: Դա հայ եւ թուրք ազգերի հաշտեցման պայմանն է: Դրանում իրենց մեղքի բաժինն ունեցան գերմանացիները, որոնք Օսմանյան կայսրության հետ դաշինքը մարդկային կյանքերից վեր դասեցին»,- ասաց խորհրդարանի նախագահը:

Դաշնային կառավարությունը, դիվանագիտական նկատառումներից ելնելով, սկզբում խուսափում էր «ցեղասպանություն» բառն օգտագործելուց:

Գերմանիայի խորհրդարանը դեռեւս 2005 թվականին ընդունել է 1915 թվականին Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային բնաջնջման, էթնիկ զտումների եւ աքսորի մասին բանաձեւ, որում սակայն նշված չի եղել «ցեղասպանություն» բառեզրը:

Գերմանիայի դիրքորոշման մեջ շրջադարձ տեղի ունեցավ 2015թ. ապրիլի 20-ին, Գերմանիայի Դաշնության արտաքին գործերի նախարար Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերի եւ կանցլեր Անգելա Մերկելի խոսնակ Շտեֆան Զայբերթի հայտարարություններից հետո: Իսկ Գերմանիայի Դաշնության նախագահ Յոահիմ Գաուկն ապրիլի 23-ին Բեռլինի Մայր տաճարում կայանացած Հայոց ցեղասպանության հիշատակի արարողությանն իր ելույթում հայերի կոտորածները «ցեղասպանություն» է որակել:

ԱՊՐԻԼԻ 24 -Ը՝ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ

Բուլղարիայի ժողովրդական ժողովի պատգամավորներն ապրիլի 24-ին ընդունել են Հայոց ցեղասպանության մասին հայտարարագիր: Փաստաթղթով Բուլղարիայի խորհրդարանը «ճանաչում է հայերի զանգվածային ոչնչացումը Օսմանյան կայսրությունում եւ հայտարարում է ապրիլի 24-ը՝ որպես զոհերի հիշատակման օր»:

Հայտարարությանը կողմ է քվեարկել 157 պատգամավոր, դեմ՝ 36-ը: Բուլղարիայի խորհրդարանի նախագահ Ցեցկա Ցաչեւան առաջարկել է մեկ րոպե լռությամբ հարգել զոհված հայերի հիշատակը, որի ժամանակ «Շարժում հանուն իրավունքի եւ ազատության» (էթնիկ թուրքերի կուսակցություն) պատգամավորները լքել են նիստերի դահլիճը:

ԷՐԴՈՂԱՆԻ ՅԱՎԱԿՅԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ ՊՈԼՍՈ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի կապակցությամբ ցավակցական նամակ է ուղարկել Պոլսո հայոց պատրիարքի փոխանորդ, արքեպիսկոպոս Արամ Աթեշյանին:

Էրդողանի նամակն ընթերցվել է պատրիարքարանի կողմից Ստամբուլի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցում 1915 թվականի զոհերի հիշատակին կազմակերպված պատարագի ժամանակ, որն ընթերցել է հայ հոգեւորական Թաթուլ Անուշյանը:

Էրդողանն ուղերձում նշել է. «Հայ քաղաքացիների համար առանձնահատուկ նշանակություն ունեցող այս օրը հարգում եմ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ մահացած օսմանցի հայերի հիշատակը եւ իմ ցավակցություններն եմ հայտնում նրանց թոռներին ու ժառանգներին»:

Էրդողանն այնուհետեւ ուղերձում հավասարության նշան է դրել պատերազմում զոհված բոլոր էթնիկ խմբերի միջեւ՝ առանց տարբերություն դնելու պատերազմի առիթն օգտագործելու միջոցով տեղահանության անվան տակ իրագործված Հայոց ցեղասպանության եւ պատերազմական գործողություններում մահացածների միջեւ:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՊԱՀԱՆՋ

Ստամբուլի Սուլթանահմեդ հրապարակում մի քանի հազար թուրքեր, տեղի եւ արտասահմանից ժամանած հայեր հավաքվել էին ու Թուրքիայից պահանջում էին՝ ճանաչել Հայոց ցեղասպանությունը, ներողություն խնդրել եւ փոխհատուցում տալ:

Թուրքիայի մարդու իրավունքների կազմակերպության նախաձեռնությամբ հավաքը տեղի է ունեցել այն վայրում, որտեղ մահվան երթին ուղարկելուց առաջ բանտարկված են պահել հայ մտավորականներին:

Նրանք եւս մեկ անգամ կոչ արեցին Թուրքիային ճանաչել ցեղասպանությունը եւ ներողություն խնդրել հայերից: «Շիրմաքար չունեցող հայերը միայն այսպես կարող են հանգիստ հանգչել»,- նշեցին նրանք:

ԿԱՆՔ ԵՎ ԿԼԻՆԵՆՔ

Ապրիլի 19-ին, Թբիլիսիի «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնում տեղի ունեցավ ժամանակակից թբիլիսցի նկարիչների՝ Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված՝ «Հայոց գողգոթա» խորագրով ցուցահանդեսը, ուր ներկայացվել էր երկրի մայրաքաղաքում ապրող եւ ստեղծագործող 27 հեղինակների գործերը:

Երեք սերունդ էր միավորել ցուցահանդեսը, ուր հայոց գողգոթան, արվեստագետի հարուստ երեւակայությամբ, ստացել էր մարմին ու շունչ, դարձել՝ ցավ, բոլոր...

Նաեւ անմեղ նախնիների հիշատակի առջեւ պարտքի այրող զգացում ու խոնարհում: Ու նաեւ արդարության հաղթանակ, որն ի դեպ արտացոլվել էր վրաց գեղանկարչուհու՝ Թամունա Սուլխանիշվիլու՝ «Նոր քարտեզ» կտավում: Ողջ երեկոն, ասես, ներշնչված էր «Մենք կանք ու կլինենք» գաղափարով:

Գեղարվեստական «Ապրում ենք եւ հիշում», «Հին ալբոմ» կոմպոզիցիաներում Գ.Մանոյանը եւ Ջ.Վեփխվածեն, ում մայրը հայ էր, ներառել էին հրաշքով փրկված նախնիների առ այսօր՝ որպես մասունք, պահված իրերը:

- Ցեղասպանության 100-րդ տարելիցի՝«Հիշում եմ եւ պահանջում» կոչը ուղղված է երիտասարդ սերնդին՝ հիշելու անմեղ զոհերին եւ պահանջելու արդար դատ,- իր օրհնության խոսքում ասաց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: Սրբազանն իր խորին շնորհակալությունը բերեց վրաց ժողովրդին՝ 100տարի առաջ իր դռները կոտորածներից մազապուրծ հայերի առջեւ բացելու, իսկ ցուցահանդեսին մասնակից վրաց նկարիչներին՝ բարոյական սատարման համար:

Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Վիրահայոց թեմի հովանավորությամբ եւ «Հայարտուն» կենտրոնի ու«ՇԷՆ» ասոցիացիայի աջակցությամբ, Թբիլիսիում օրերս հրատարակվել է վերոնշյալ գեղանկարիչների գործերն ամփոփող՝ «Հայոց Գողգոթան» կատալոգը:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՍԼԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ. «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ»

Ապրիլի 20-ին Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Ռուսլան Պողոսյանը, Թբիլիսիում հայտնի «Ռեպորտեր» լրատվա-վերլուծական կենտրոնում, հատուկ հրավիրված ճեպասուլիսում, որին մասնակցում էին 15 ԶԼՄ-ների, առաջատար հեռուստակայանների լրագրողներ, անդրադառնալով Հայոց ցեղասպանության թեմային, նշեց, որ այդ հարցում վրաց ժողովրդի բարոյական աջակցությունը դրական ազդեցություն է գործում երկու երկրների միջեւ առկա հարաբերությունների վրա: Պատգամավորի հավաստմամբ, Ցեղասպանությունից հետո անցած հարյուր տարվա ժամանակահատվածում միշտ զգացվել է վրաց հասարակայնության աջակցությունը: «Այսօր արդեն Ցեղասպանությունը պատմություն է, սակայն, միաժամանակ, այն մեծ ցավ է պատճառում, եւ մենք երբեք չենք մոռանա նահատակներին: Մենք իրավունք չունենք մոռանալու նրանց: Այսօր շատ են խոսում այդ իրադարձությունների քաղաքական եւ իրավական գնահատականների մասին: Ես գտնում եմ, որ ոչ պակաս նշանակություն ունի բարոյական աջակցությունը, որը մենք միշտ զգացել եւ զգում ենք Վրաստանում: Ինչ վերաբերվում է իրավական եւ քաղաքական գնահատականներին, ապա դա, նախեւառաջ, անհրաժեշտ է, որպեսզի առաջիկայում ոչ մեկը չդառնա բռնության զոհ: Ցանկանում եմ իմ ազգի ցավը ներկայացնել վրաց հասարակայնությանը եւ փոխարենը ստանալ եղբայրական աջակցություն»,- հայտարարեց Ռուսլան Պողոսյանը:

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ

ԽԱՉՔԱՐ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՁՈՀԵՐԻ

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ, Ախալքալաքիի մունիցիպալիտետի Ախալքալաքիի Խանդո, էխտիլա, Կուլիկամ, Դադեշ գյուղերում կանգնեցվեցին Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակի խաչքարեր:

Ցեղասպանության 100-րդ տարելիցի նախաշեմին կանգնեցված խաչքարերն օծվեցին ձեռամբ Սամցխե-Ջավախեթիի եւ Ծալկա տարածաշրջանի առաջնորդական փոխանորդ Տեր Բաբգէն աբեղա Սալբիյանի:

Նշենք, որ էխտիլա գյուղում խաչքարը կանգնեցվեց Դեմուրճյան եղբայրների հովանավորությամբ, իսկ Կուլիկամում իր ազգանվեր գործունեությամբ աչքի ընկավ Սուրիկ Մարաբյանը:

Միջոցառմանը ներկա էին Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Սամվել Պետրոսյանը, Ախալքալաքիի մունիցիպալիտետի վարչության նախագահ Էդուարդ Աղասարյանը, սակրեբուլոյի նախագահ Համլետ Մովսիսյանը, Նինոծմինդայի մունիցիպալիտետի վարչության նախագահ Գագիկ Կարսլյանը, մտավորականներ, մանկավարժներ, այլք: Այստեղ էին գտնվում նաեւ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը, ՀԱՀ-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ Սոս Սահակյանը:

ՊՐԵՄԻԵՐԱ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ «ԱՅՍ ԳԻՇԵՐ ՈՉ ՈՔ ՉԻ ՔՆԵԼՈՒ»

Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանի եւ թատրոնի ռեժիսոր Լեւոն Ուզունյանի համատեղ բեմադրությամբ, լեհ դրամատուրգ Ինգմար Վիլկվիստի «Հելվերի գիշերը» պիեսի մոտիվներով ստեղծված ներկայացման պրեմիերան անցավ Թբիլիսիի Ա.Գրիբոյեդովի անվան պետական ռուսական դրամատիկական թատրոնում: Ասենք, որ ռեժիսորական նոր լուծումների արդյունքում, լեհ դրամատուրգի պիեսը վերանվանվել էր «Այս գիշեր ոչ ոք չի քնելու»: Ներկայացումը նվիրված է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին:

Դերերը մարմնավորեցին թատրոնի ճանաչված դերասանուհի Լեյլա Մկրտչյանը (Մայր) եւ թատերական ասպարեզ նոր ոտք դրած, երիտասարդ դերասան Արթուր Գասպարյանը (Որդի): Նշենք նաեւ, որ «Այս գիշեր ոչ ոք չի քնելու» բեմադրությունը ներկայացվել էր Հայաստանի թատերական գործիչների ամենամյա «Արտավազդ» փառատոնին, ուր Լեյլա Մկրտչյանին «Կանացի լավագույն կերպար» անվանակարգում մրցանակ է շնորհվել:

Ներկայացման հաջողությունը ապահովվել էր նաեւ բեմադրության երաժշտության, նկարչական, զգեստների ձեւավորումների հեղինակներ Վալերի Ամիրաղյանի, Մալխազ Իոբաշվիլու, Թամարա Աղաջանովայի եւ ողջ տեխնիկական աշխատակազմի իրագործած համահունչ աշխատանքի, ինչպես նաեւ պիեսը ռուսերենից թարգմանող Մանանա Կարապետյանի շնորհիվ:

Ներկայացումը դիտեցին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը, Վրաստանի խորհրդարանի անդամ Ռուսլան Պողոսյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՎԻՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՇԵԺ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հավարտ Սուրբ պատարագի, պատարագիչ Տեր Նարեկ քահանա Ղուշչյանը օրվա խորհրդի մասին քարոզի խոսքում հիշատակեց նախորդ օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում սրբադասված մեկուկես միլիոն նահատակների հիշատակը, սրբեր, որ դարձան հայ ժողովրդի պահապանները երկնքում: Տեր հայրը շնորհակություն հայտնեց քույր եկեղեցիներ՝ Հռոմեական-Կաթոլիկ, Ավետարանական-Լյութերանական եւ Ավետարանական-Մկրտական Սուրբ եկեղեցիներին, որոնք կիսելով հայոց վիշտը այս օրերին իրենց աղոթքով, գուժկան զանգերով եւ Հիշատակի պատարագին իրենց ներկայությամբ ոգեկոչեցին Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը:

Պատարագից հետո, ներկաները ծաղկեպսակ դրեցին ու ծաղիկներ խոնարհեցին եկեղեցու բակում կանգնեցված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի խաչքարին, հոգեւոր դասը շարականներ երգեց, իսկ Տեր Մանուկ քահանա Ջեյնալյանը կատարեց Ցեղասպանության 100-ամյակին նվիրված «Հրաշակերտ բազմություն» շարականը:

Այնուհետեւ ժողովուրդը բողոքի պաստառներով, Վրաստանի եւ Հայաստանի պետական դրոշներով շարժվեց դեպի Թբիլիսիում Թուրքիայի Հանրապետության դեսպանություն, որտեղ կազմակերպվեց բողոքի խաղաղ հանրահավաք: Բազմամարդ էր հանրահավաքը, որին մասնակցեցին Թբիլիսիի հայկական կազմակերպություններ, այլ համայնքների ներկայացուցիչներ, Վրաստանի հայաբնակ շրջաններից հատուկ ժամանած հայեր: Բողոքի ակցիային իրենց մասնակցությունն էին բերել վրաց քաղաքական գործիչներ, ովքեր դատապարտելով Հայոց ցեղասպանությունը, վրաց իշխանություններին կոչ արեցին ճանաչել եւ դատապարտել Հայոց ցեղասպանությունը նման ոճրագործությունները կանխելու նպատակով: Հանրահավաքին հնչեցին նաեւ բողոքի բանաստեղծություններ եւ հայրենասիրական երգեր:

Ապրիլի 24-ին Հիշատակի պատարագներ, բողոքի ակցիաներ եւ խաղաղ հանրահավաքներ տեղի ունեցան Վրաստանի բոլոր հայաբնակ քաղաքներում եւ գյուղերում:

ՆԻՆՈԾՄԻՆԴԱ

ՕԾՎԵՑ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱՄԵՆԱՄԵԾ ՀՈՒՇԱՐՁԱՆ-ԽԱՉՔԱՐԸ

2014 թվականի ապրիլի 23-ին, Նինոծմինդայի մշակույթի տան առջեւ, ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի եւ թեմի հոգեւոր դասի, օծվեց հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակն հավերժացնող հուշարձան-խաչքարը՝ ամենախոշորը համայն Վրաստանում: Նրա շինարարությունն իրականացվեց ՌԴ անվանի արդյունաբերող Արմեն Ղարսլյանի եւ նրա եղբայր Թաթուլի ու Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Հենզել Մկոյանի եւ նրա եղբայր Մարտունիի անձնական միջոցներով: Հայոց մեծ եղեռնի զոհերի ոգեկոչման 100 – ամյա տարելիցի միջոցառումների կիզակետն այսօր առավոտյան ծավալվեց հենց այդ հուշարձանի շրջակայքում...

Նինոծմինդայում դեռ ձմեռ է: Անընդհատ տեղացող ձյունը, ցուրտը, սակայն, անկարող են կասեցնել մարդկանց հոծ խմբերի հոսքը դեպի Նինոծմինդա, դեպի Սուրբ Սարգիս եկեղեցի, ուր Սրբասուրբ պատարագից հետո, պսակներով, բազմաթիվ ծաղիկներով, Վրաստանի եւ Հայաստանի պետական դրոշներով, նրանք ուղղվում են դեպի քաղաքի կենտրոն, դեպի Մեծ եղեռնի զոհերի հուշարձան:

Երիտասարդների՝ հատուկ հանդերձանքով հարյուրակը խոնարհվում է հուշարձանի առաջ, ազգային տարազներով աղջիկները վառվող մոմեր են դնում պատվանդանին:

Հուշարձանին են մոտենում եւ պսակներ ու ծաղիկներ խոնարհում Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Հենզել Մկոյանը, շրջանի գամգեբելիհ՝ Գագիկ Կարսլյանը, սակրեբուլոյի նախագահ Սմբատ Կյուրեղյանը, շրջանային ժողովի պատգամավորներ, մտավորականներ. հավաքվածների թիվը հասնում էր մոտ 6 հազարի: Նրանք եկել են իրենց խոնարհումը բերելու Օսմանյան կայսրության կողմից ոչնչացված 1,5 միլիոն հայերի հիշատակը ոգեկոչելու, գլխավոր հանդիսությանը մասնակցելու, «ո՛չ» ասելու եւ դատապարտելու բռնությունն ու մարդատյացությունը ողջ աշխարհում:

Սկսվում է «Վերածնունդ» կոչվող համերգային ծրագիրը, որում մեր ժողովրդի անցած դժվարին, ողբերգական ուղին է. որքան դառն ու դաժան, այնքան՝ հերոսական եւ լուսավոր:

Մշակույթի տան աստիճանավանդակին քաղաքի երաժշտական դպրոցի եւ «Ռաֆայել Ջավախ» կրթամշակութային կենտրոնի 100 հոգանոց երգչախումբն է, ասմունքի ստուդիայի սաները, մշակույթի տան ժողովրդական եւ ազգագրական համույթների պարողներն ու երգիչները, անհատ կատարողներ՝ մունիցիպալիտետի շատ բնակավայրերից:

ԺՈՐԱ ՄՆԽՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԸՆԴԳԾՎԵԾ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ԲՆՈՒՅԹԸ

Ապրիլի 24-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի հիշատակի արարողությանը մասնակցելու նպատակով Հայաստան ժամանած Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:

Սերժ Սարգսյանը շնորհակալություն հայտնեց ՌԴ նախագահին՝ հայ ժողովրդի համար կարեւոր նշանակություն ունեցող այս օրը Երեւանում՝ մեր ժողովրդի կողքին լինելու համար:

Պատասխան խոսքում, ՌԴ Նախագահը շնորհակալություն հայտնեց ՀՀ նախագահին հրավերի համար եւ եւս մեկ անգամ ընդգծեց Հայաստանի եւ Ռուսաստանի, հայ ժողովրդի եւ ռուս ժողովրդի, ինչպես նաեւ Ռուսաստանի Դաշնության այլ ժողովուրդների միջեւ հարաբերությունների առանձնահատուկ բնույթը:

ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀՅԱԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապրիլի 24-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի հետ, ով Հայաստան էր ժամանել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի հիշատակի արարողությանը մասնակցելու նպատակով:

Սերժ Սարգսյանը ողջունեց նախագահ Օլանդին եւ նշեց, որ իր համար մեծ պատիվ էր կրկին հյուրընկալել Ֆրանսիայի նախագահին Հայաստանում, որտեղ նա անչափ սպասված ու սիրված հյուր է:

Սերժ Սարգսյանն ընդգծել է, որ Հայաստանը հպարտ է Ֆրանսիայի նման պետության հետ առանձնաշնորհյալ հարաբերություններ ունենալու համար, որի հիմքում այսպիսի քայլերն են:

Ֆրանսուա Օլանդն ընդգծեց, թե այնպիսի զգացողություն ունի, որ Երեւանում պատմական իրադարձության մասնակցեց. պատմական, որովհետեւ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցն էր: Պատմական, որովհետեւ միջոցառման բոլոր մասնակիցները խաղաղության եւ հույսի ուղերձ հղեցին այն ազգերին, որոնք պատմության ընթացքում ճնշվել են ու դառնություններ կրել:

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ԲԱՆԱՁԵՎԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌԹԻՎ

Ապրիլի 25-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունեց Եվրոպական ժողովրդական կուսակցության (ԵԺԿ) նախագահ Ժոզեֆ Դոլիին:

Հանդիպմանը Սերժ Սարգսյանը շնորհակալություն հայտնեց ԵԺԿ նախագահին՝ հրավերն ընդունելու եւ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ոգեկոչման միջոցառումների օրերին հայ ժողովրդի կողքին լինելու համար:

Սերժ Սարգսյանն ընդգծեց ս.թ. ապրիլի 15-ին ԵԺԿ-ի եւ անձամբ պարոն Դոլի ներդրումը Եվրոպական խորհրդարանի՝ Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձեւի ընդունման գործում:

ԵԺԿ նախագահ Ժոզեֆ Դոլը շնորհակալություն հայտնեց Սերժ Սարգսյանին՝ Երեւան այցելելու եւ Ցեղասպանության 100-րդ տարելիցի հիշատակի միջոցառումների մասնակցության հրավերի համար:

Հանդիպման ընթացքում, Հայաստանի նախագահը եւ ԵԺԿ նախագահը քննարկեցին Հայաստան-Եվրոպական Միություն համագործակցության ընթացքին եւ զարգացման հեռանկարին, ինչպես նաեւ առաջիկայում Ռիգայում կայանալիք Արեւելյան գործընկերության գագաթաժողովի նախապատրաստության հետ կապված հարցեր:

«ԵԿԵՂԵՑԻՆԵՐՆ ԸՆԴԴԵՄ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ» ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆԻՍՏ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Ապրիլի 22-ին Երեւանի Մարզահամերգային համալիրում աշխատանքն սկսեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով կազմակերպված «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» միջազգային երկօրյա համաժողովը, որի աշխատանքներին մասնակցում էին հայ եւ օտարերկրացի հասարակական, քաղաքական գործիչներ, Քրիստոնեական տարբեր եկեղեցիների ներկայացուցիչներ, կրթության եւ գիտության մշակներ:

Համաժողովի բացման հանդիսավոր արարողությունից հետո, «Եկեղեցիներն ընդդեմ ցեղասպանության հանցագործության. մարդկային կյանքը՝ Աստծո պարգեւ» խորագրի ներքո տեղի ունեցավ առանձին միջեկեղեցական նիստ՝ նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի եւ ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող Վիգեն Սարգսյանի, ինչպես նաեւ մասնակցությամբ Քույր եկեղեցիների հոգեւոր պետերի ու պատվիրակությունների, միջեկեղեցական կազմակերպությունների ներկայացուցիչների, Հայ եկեղեցու թեմական առաջնորդների: Նիստը վարել է Գերաշնորհ Տեր Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳՐԵՐ «Genealogy» ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ապրիլի 27-ին ընդունել է «Եվրատեսիլ-2015» երգի միջազգային մրցույթին Հայաստանը ներկայացնող «Genealogy» (թարգմանաբար՝ ծագումնաբանություն) խմբի վեց անդամներին, ովքեր, խորհրդանշելով Անմոռուկի հինգ թերթիկները, ներկայացնում են երկրագնդի հինգ աշխարհամասերում սփռված հայ ժողովրդի նոր սերնդին եւ Հայաստանը:

Խմբում ընդգրկված Եսայի Ալթունյանը՝ Եվրոպայից, Թամար Կապրելյանը՝ Ամերիկայից, Վահե Թիլբյանը՝ Աֆրիկայից, Մերի-Ջին Օ'Դոհերթի Վասմաթզյանը՝ Ավստրալիայից, Ստեֆանի Թոփալյանը՝ Ասիայից եւ Ինգա Արշակյանը՝ Հայաստանից, մրցույթին ներկայացնելու են «Face The Shadow» (թարգմանաբար՝ առերեսվիր ստվերին) երգը: Այն համամարդկային արժեքների մասին է՝ սիրո, համերաշխության, հավատարմության եւ սերունդների ծագումնաբանության՝ գենետիկայի:

Նախագահը խմբի հինգ անդամներին, ովքեր բնակվում են արտերկրում եւ մինչ այս դիմել էին ՀՀ նախագահին՝ իրենց Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու խնդրանքով, հանդիպման ժամանակ հանձնել է ՀՀ անձնագրերը:

«Եվրատեսիլ»-ի հայաստանյան ներկայացուցիչները շնորհակալություն են հայտնել Հայաստանի նախագահին ջերմ խոսքերի եւ ընդունելության համար:

ՍՏԵՂԾՎՈՒՄ ԵՆ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐ

Հայաստանում աշխատանք փնտրողների թիվը ընթացիկ տարվա մարտի 1-ի դրությամբ կազմում է 76,4 հազար մարդ: Զբաղվածության պետական գործակալության տվյալներով, գործազուրկների թվաքանակը կազմում է աշխատանք փնտրողների 91,2 տոկոսը կամ 69,7 հազար մարդ: Այս ցուցանիշը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 21,2 տոկոսով՝ 57,5 հազար մարդով:

Շարունակում է բարձր մնալ գործազուրկ կանանց թիվը, որը կազմում է գործազուրկների թվի 71 տոկոսը կամ 49,5 հազար մարդ, երիտասարդների թվաքանակը կազմում է գործազուրկների 24 տոկոսը կամ 16,7 հազար մարդ, իսկ հաշմանդամություն ունեցող անձիք 3,1 տոկոսը կամ 2,1 հազար մարդ: Գործազուրկների թվաքանակում աշխատաշուկայում անմրցունակ անձանց թվաքանակը կազմում է 58,3 հազար անձ կամ 83,6 տոկոս:

Ըստ տարիքի, գործազուրկների թվում 16-29 տարեկանները կազմում են 24 տոկոս, 30-44 տարեկանները՝ 39 տոկոս, 45-50 տարեկանները՝ 21,5 տոկոս, 55-ից բարձր տարիքի անձիք՝ 15,5 տոկոս: 2015 թվականի հունվար-փետրվար ամիսներին աշխատանքի է տեղավորվել 1399 աշխատանք փնտրող անձ, որից 914-ը՝ կին են, 1168-ը՝ աշխատաշուկայում անմրցունակ անձիք:

ՆՈՐ ԾՈՒՅԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅՈՅ ԵՂԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Հայաստանի նախագահ, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի նախագահ Սերժ Սարգսյանը ներկա է գտնվել Հայոց ցեղասպանության թանգարանի նոր մշտական ցուցադրության պաշտոնական բացման արարողությանը: Սերժ Սարգսյանը շրջայց է կատարել թանգարան-ինստիտուտում, ծանոթացել նոր ցուցադրության նյութերին, թանգարանում դրանց պատշաճ ներկայացման համար ստեղծված ժամանակակից պայմաններին: Շրջայցի ավարտին Սերժ Սարգսյանը գրառում է կատարել պատվավոր հյուրերի գրքում: Թանգարանի նոր ցուցադրության պաշտոնական բացման կապակցությամբ Հայաստանի նախագահը թանգարանին նվիրել է «Գրիգորի Նարեկայ Վանից վանականի Մատեան Ողբերգութեան, Ի Կոստանդնուպօլիս, 1850» գիրքը, որը փրկվել է 1915 թվականին տեղահանության ժամանակ: Թանգարանի հատուկ հյուրերը եւս հանչնել են իրենց նվերները:

ԱՅԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՂԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հրավերով, ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի միջոցառումներին մասնակցելու նպատակով, Հայաստան ժամանած Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիայի, Սերբիայի եւ Կիպրոսի նախագահներն այցելեցին Հայոց ցեղասպանության թանգարան: Չորս երկրների առաջնորդները շրջայց են կատարել Հայոց ցեղասպանության թանգարանում, ծանոթացել նոր մշտական ցուցադրությանը:

Չորս նախագահները շրջայցի ավարտին գրառում են կատարել Պատվավոր հյուրերի մատյանում: Նախագահները մեծ տպավորություն են ստացել նորաբաց թանգարանային ցուցադրությունից:

ՀԱՄԱԽԱՌՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԸ ԿՐՃԱՏՎԵԼ ԵՆ 90 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐՈՎ

Հայաստանի համախառն միջազգային պահուստների ծավալը 2015 թվականի փետրվարի վերջին կազմել է 1 միլիարդ 260,9 մլն դոլար՝ հունվարի համեմատ նվազելով 6,67 տոկոսով կամ 90,2 մլն դոլարով:

Համախառն պահուստների կազմում ազատ փոխարկելի արժույթով արտաքին ակտիվները կազմել են 1 մլրդ 255,4 մլն դոլար, որից 915,5 մլն դոլարը՝ արժեթղթեր, իսկ 339,9 մլն-ը՝ կանխիկ արտարժույթ եւ ավանդներ:

2014 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ, համախառն միջազգային պահուստների ծավալը կազմում էր 1 մլրդ 489,3 միլիոն ԱՄՆ դոլար: 2015թ. հունվարին արդեն պահուստների ծավալը կազմում էր 1 մլրդ 351,1 մլն դոլար՝ 2014-ի դեկտեմբերի համեմատ նվազելով 10,2 տոկոսով:

ՍՏԱՑՎԵԼ Է 5,8 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Մարդասիրական օգնության կարգով Հայաստան ներմուծված ապրանքների ծավալը հունվար-փետրվարին կազմել է 260 տոննա: Դրանց արժեքը դրամային արտահայտությամբ կազմել է շուրջ 2,8 մլրդ. իսկ դոլարով՝ 5,8 մլն: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, մարդասիրական օգնության ծավալներն աճել են շուրջ 22 տոկոսով:

Հայաստանին տրամադրված մարդասիրական օգնության ընդհանուր ծավալների 42,9 տոկոսն ուղարկվել է Շվեյցարիայից, 24,2 տոկոսը՝ ԱՄՆ-ից, 10 տոկոսը՝ Ավստրալիայից, 6,2 տոկոսը՝ Հնդկաստանից:

Ստացված օգնության 56,9 տոկոսը կազմել է քիմիայի եւ դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքը, 12,6 տոկոսը՝ սարքեր եւ ապարատները, 7,1 տոկոսը՝ մանածագործական իրերը, 5,3 տոկոսը՝ կոշկեղեն, գլխարկներ եւ հովանոցները, 3,3 տոկոսը՝ մեքենաներ, սարքավորումներ եւ մեխանիզմները, 3,2 տոկոսը՝ տարբեր արդյունաբերական ապրանքները:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԱՊՐԻԼ

26.04.2015թ. Կարմիր կիրակի

Հայաստանյայց Առաքելական եկեղեցու տոնացույցում Սուրբ Զատկին հաջորդող կիրակիներն հատուկ խորհրդանշական անվանումներ ունեն: Զատկի չորրորդ կիրակին կոչվում է Կարմիր: Կարմիրը Քրիստոսի եկեղեցու եւ հավատի համար մարտիրոսացած նահատակների սուրբ արյան խորհրդանիշն է:

ԱՎԱՆԴՈՒՅԹ

«ԱՂԱՅԱՆԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՕՐԸ»՝ ՄԱՅԻՍԻ 2-ԻՆ



Ապրիլի 16-ին լրացավ հայ դասական Ղազարոս Աղայանի ծննդյան 175-ամյակը (1840-1911): Տարելիցը, հարկավ, առանձնակի իմաստ կհաղորդի ավանդական «Աղայանական պոեզիայի օրվան» նվիրված հանդիսությունը, որը նշվում է սկսած 2000 թվականից, գրողի ծննդավայր Բոլնիս-Խաչենում (Վրաստան, Բոլնիսիի շրջան):

Այս տարի ժողովրդական ամենամյա տոնախմբությունը տեղի կունենա մայիսի 2-ին: Ինչպես միշտ նրան կմասնակցեն ժողովրդական տարբեր խավեր, Թբիլիսիից, Վրաստանի այլ քաղաքներից, շրջաններից, ինչպես եւ Հայաստանից հրավիրված գրողներ, մտավորականներ, պոեզիայի սիրահարներ:

ՍՊՈՐՏ

ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՆԱՆՑ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ ԱՇԽԱՐՀԻ ԹԻՄԱՅԻՆ ՉԵՄՊԻՈՆ, ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԹԻՄԸ՝ ԲՐՈՆԶԵ ՄԵԴԱԼԱԿԻՐ

Չինաստանի Չենդու քաղաքում անցկացվող աշխարհի թիմային առաջնությունում, Վրաստանի կանանց հավաքականը, մեկ միավորի տարբերությամբ առավելության հասնելով Չինաստանի թիմի նկատմամբ, 17 միավորով դարձավ աշխարհի թիմային չեմպիոն:

Իսկ ինչ վերաբերում է Ծաղկաձորում անէկացված շախմատի աշխարհի ծիմային առաջնությանը, ապա այստեղ Հայաստանի հավաքականը արժանացավ բրոնզե մեդալի, մրցանակային վերին պատվանդանները զիջելով Չինաստանի եւ Ուկրաինայի հավաքականներին:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԳՈՀԱՑՈՒՑԻՉ ՉԵՆ

Թբիլիսիում ավարտված ծանրամարտի Եվրոպայի առաջնությունում Հայաստանի ներկայացուցիչները նվաճած մեծ մեդալներով՝ 1-ական ոսկի, արծաթ, բրոնզ, զբաղեցրին 6-րդ տեղը՝ այն կիսելով Ֆրանսիայի ընտրանու հետ, իսկ Վրաստանի թիմը իր ակտիվում ոչ մի մեդալ չկարողացավ գրանցել:

Առաջատարը Ուկրաինան է, որը նվաճել է 3 ոսկե եւ 1 արծաթե մեդալ:

Ուկրաինային հաջորդում են Թուրքիան, Ադրբեջանը, Ռուսաստանը, Մոլդովան: Նշենք, որ ռուսաստանցի մարզիկները նվաճեցին ընդհանուր 7 մեդալ, ինչը լավագույն ցուցանիշն էր, սակայն դրանցից միայն 1-ն էր ոսկի, 5-ը՝ արծաթ, 1-ը՝ բրոնզ:

Ընդհանուր մեդալների քանակով (ներառյալ՝ փոքր մեդալները) Հայաստանի թիմը նվաճեց 8 մեդալ՝ 2-ական ոսկե ու բրոնզե, 4 արծաթե: Այս արդյունքով, Հայաստանի պատվիրակությունը 11-րդն էր:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅԱԳԵՏ ՆԻՆՈ ԱՓՑԻԱՈՒՐՈՒ ՀԵՏ

Թբիլիսիում գործող «Հայկական գիտահետազոտական կենտրոն Վրաստանում» կազմակերպությունը (նախագահ՝ պրոֆ. Էմմա Ախտյան) հանդիպում էր կազմակերպել վրաց հայագետ, պրոֆեսոր, Հայաստանում Վրաստանի դեսպանության խորհրդական Նինո Ափցիաուրու հետ:

Նինո Ափցիաուրին հանդես եկավ «Վրացագիտությունը Հայաստանում» զեկուցումով եւ, հանդիպման շրջանակներում, հնարավորինս ներկայացրեց վրացագիտության արժեքավոր ավանդույթները, որի ակունքներին անցյալից մինչ այսօր կանգնած են եղել եւ կանգնած են հայ, վրացի, եվրոպացի՝ գրական, լեզվաբանական մտքի նշանավորները:

Ափցիաուրու ընդգրկուն անդրադարձում ներկայացվեցին այդ բնագավառի պատմական-բանասիրական հետազոտությունները, որոնց շարքում առանձնապես մատնանշվեց Թամրազյանի՝ հնագույն շրջանից մինչեւ մեր օրերը՝ վրաց գրականության հազվագյուտ գրավոր հուշարձաններն ընդգրկող «Վրաց երկինք» ծավալուն աշխատությունը (1990թ., Երեւան): Խոսվեց հայ-վրացական համատեղ անցկացված գիտաժողովների մասին:

Նինո Ափցիաուրին ներկաներին, մասնավորապես, իրազեկեց Հայաստանի մայրաքաղաք Երեւանի Վ.Բրյուսովի անվան օտար լեզուների, Գրականության, Պատմության, Ազգագրության ինստիտուտներում գործող վրացագիտության արդի կենտրոնները: Նա պատմեց, որ ապրիլի 14-ին Երեւանում պարբերաբար նշվում է «Վրաց լեզվի օրը»...

Հայ-վրացական մշակութային ավանդական կապերին ավելացավ եւս մեկ էջ: Ի նշանավորում հանդիպման՝ Վիրահայոց թեմի կրթամշակութային «Հայարտուն» կենտրոնի համակարգող Լեւոն Չիդիլյանը հարգարժան հյուրին փոխանցեց վիրահայ նշանավոր գեղանկարիչների գործերն ամփոփող՝ «Թբիլիսին-Նոր Բաբելոն» ալբոմը:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

«ՎՐԱՍՏԱՆԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

Ապրիլի 20-28-ին Թբիլիսիի Շալվա Ամիրանաշվիլու անվան Վրաստանի կերպարվեստի թանգարանում գործում էր «Վրաստանի էթնիկական եւ կրոնական բազմերանգությունը» ցուցահանդեսը:

Ցուցադրանքում ներկայացված էին տարբեր նկարիչների 115 աշխատանքներ, որոնք ընդգրկում են 19-21-րդ դարերի ժամանակաշրջանը: Միջոցառումը նվիրված էր ժողովրդական պաշտպանի աշխատակազմին առընթեր գործող Հանդուրժողության կենտրոնի տասնամյա հոբելյանին: Ցուցահանդեսում, մասնավորապես, ներկայացված են գործեր, որոնց հեղինակներն են Մ.Տիլկեն, Կ.Զդանեւիչը, Ս.Փարաջանովը, Ռ.Զոմերը, Ա.Մելիքովը, Լ. Բայախչեւը, Շ.Կոբոշվիլին, Դ.Գվելեսիանին, Գ.Խաչատրյանը, Բ.Ռոմանովսկին, Ց.Շուխաեւը, Վ.Բեյբուտովա-Գաբունիան եւ ուրիշներ:

Վրաստանի ազգային թանգարանից կազմակերպիչների տեղեկատվության համաձայն, ցուցադրանքում ներկայացված կտավների մի մասը թանգարանին է փոխանցվել մասնավոր հավաքածուներից:

«Առանձնակի ուշադրություն է դարձվում այն նկարներին, որտեղ հեղինակները պատկերում են հին Թբիլիսին: 19-րդ դարավերջի քաղաքի կոլորիտը, նրա հանդարտ ռիթմը եւ աստիճանական վերափոխումը. սա այն է, ինչ հետաքրքրում է այսօրվա հանրությանը, հատկապես այն ժամանակ, երբ շատերն սկսել են մոռանալ մեր երկրի պատմական բազմազգության մասին»,- նշել են կազմակերպիչները:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ԵՐԵԽԱՆԵՐԸ ԿՀՐԱՎԻՐՎԵՆ ՍՈՒՊԵՐԳԱՎԱԹԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ

Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիան ծրագրում է Թբիլիսիում անցկացվելիք ՈՒԵՖԱ-ի սուպերգավաթի հանդիպմանը հրավիրել սոցիալապես անպաշտպան ընտանիքների կամ մանկատների 9-12 տարեկան երեխաներ Հայաստանից, Ադրբեջանից, Ուկրաինայից, Ռուսաստանից եւ այլ երկրներից: Այդ մասին հայտարարել է Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Զվիադ Սիճինավան:

Բացառված չէ, որ հրավիրված երեխաների համար Թբիլիսիում կանցկացվի մինի ֆուտբոլի բարեկամական մրցաշար: Հիշեցնենք, որ օգոստոսի 11-ին Վրաստանը կհյուրընկալի ՈՒԵՖԱ-ի սուպերգավաթի եզրափակիչը, որտեղ պատվավոր գավաթը կվիճարկեն Եվրոպայի չեմպիոնների լիգայի ու Եվրոպայի լիգայի հաղթողները:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Խարդախ, ստախոս: 8.Պնակ, սկավառակ: 10.Ամերիկացի դերասանուհի ... Բերիմոր: 11.Լեռ: 13.Առավելագույն: 15.Սարդի ցանց: 16.Ֆրանսիացի ֆուտբոլիստ, մարզիչ Լորան ...: 17.Հնագույն քաղաք-պետություն Հյուսիսային Միջագետքում, Եփրատի ափին: 19.Առավոտը վաղ, շատ շուտ: 23.Իրավացի կերպով: 26.Վրաստանում գործող վարկային միկրոֆինանսական կազմակերպություն: 27.Հին Ֆրանսիական ժողովրդական պարահանդեսային պար: 28.Խաղողի չիր: 29.Հայ թատրոնի եւ կինոյի դերասանուհի ... Ավետիսյան: 32.Ֆրանսիացի ֆուտբոլիստ Պատրիս ...: 33.... միջավայր: 36.Այժմ (բրբ.): 37.Մանրաբեկոր, փխրուն ապար: 39.Փոքրիկ լիճ: 40.Հյուսիսկովկասյան էպոս: 42.Ազնվական, բարձր դասի պատկանող անձ: 43.Ֆրանսահայ երգիչ ... Ալթունյան: 44.13-րդ դարի հայ ճարտարապետ: 45.Մի շարք պտուղների հատիկաձեւ սերմերը՝ կորիզները: 46.Նորածնի բերանին: 47.Լարային աղեղնավոր երաժշտական գործիք:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Մրսած թոքերին հագուրդ տալ: 2.Դժոխք: 3.Իրաքում հարգի անուն: 4.Սպայական կոչում: 5.Հարս ու ...: 6.Անգլիացի գրող եւ ճանապարհորդ, Ջոն ...: 9.Սուսիկ-...: 12.Մարդ ու կին: 14.Ավիատիեզերային սարքավորումներ արտադրող Ֆրանսիական ընկերություն: 18.Քաղաք Շվեդիայում: 20.Իր: 21.Քաղաք Ֆրանսիայում: 22.Արգելք, խափանող բան: 23.Պայման, դրություն: 24.Առանց ժամկետի: 25.Մամա: 30.Նշան դրած աղջիկ, հարսնացու: 31.Երկրամաս Վրաստանում: 34.Անբան: 35.Խաղի անզուսպ մոլուցք: 38.Վրան աղ ցանել: 41.Ընտանի կենդանի:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Խորեն: 5.Բարդ: 9.Այրում: 10.Իրատես: 12.Միկա: 13.Միլիարդ: 17.Ալան: 20.Նառա: 22.Ուկրաինա: 24.Մաստ: 26.Դրվագ: 29.Աքցան: 31.Աջիկա: 34.Մավր: 36.Աղմկել: 37.Կենցաղ: 38.Մուշ: 39.Հեռու: 40.Անհոգի: 43.Ծմակ: 45.Իրան: 46.Զուսպ: 48.Քուն: 49.Կուբա: 51.Որս: 53.Գայլ: 56.Ակտ: 58.Ոսպ: 60.Նար: 61.Նամուս: 62.Իվանե: 63.Արտ: 64.Ռոպե: 65.Կար:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Որակ: 3.Եդեմ: 4.Այրի: 6.Ապինա: 7.Դրամ: 8.Սիփան: 11.Սինուս: 14.Աղասի: 15.Դանդաղ: 16.Մամա: 18.Լար: 19.Նրա: 21.Աչք: 23.Կտավ: 25.Անմահ: 27.Վիկտոր: 28.Գալկին: 29.Արկած: 30.Ցինգա: 32.Ջրմուղ: 33.Կաշառք: 35.Աղերս: 41.Հինգ: 42.Գալյա: 44.Կզակ: 47.Պոեմ: 49.Կորիզ: 50.Բանան: 52.Սոսե: 59.Պիրկ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445